Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Ապրիլի 22-ին, համաձայն հին տոմարի, Վիրահայոց թեմի Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գևորգ, Սուրբ Էջմիածին և Բաթումի Սուրբ Փրկիչ եկեղեցիներում մատուցվեց Ճրագալույցի Սուրբ պատարագ: (Նշենք, որ թեմի Սամցխե-Ջավախքի փոխառաջնորդությունը եկեղեցական տոները նշում է նոր տոմարով): Հընթացս Պատարագի ընթերցվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի՝ վիրահայությանն ուղղված շնորհավորական ուղերձը:

Մինչ ուշ երեկո շարունակվեց հավատացյալների անդադրուն հոսքը հայոց եկեղեցիներ: Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցու դռները բաց էին ամբողջ գիշեր: Եկեղեցու սպասավորների հետ միասին, այդ օրն աղոթքով լուսացրեցին հավատացյալները, նրանք, ովքեր Ավագ Շաբաթվա խորհրդաշատ օրերին մասնակիցն էին դառնում եկեղեցում անցկացվելիք հոգեպարար արարողությունների:

Ապրիլի 23-ի առավոտյան մատուցվեց Ջատկական Սուրբ Պատարագ: Առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցում պատարագիչն էր թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Հավարտ արարողության Սրբազան Հայրն ընթերցեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի՝ վիրահայությանն ուղղված շնորհավորական ուղերձը, որից հետո առաջնորդ Սրբազան Հայրը շնորհավորեց ներկաներին և ուղղեց նրանց քարոզի իր խոսքը:

Ջատկական տոնը նշանավորվեց եկեղեցու բակում թեմի մշակութային բաժնի նախաձեռնած համերգով, որը վերածվեց ժողովրդական մեծ տոնախմբության:

ԱՊՐԻԼ 24-Ի ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Ապրիլի 24-ին, ժամը 10.00-ին, նախաձեռնությամբ Վրաստանի հայկական համագործակցության կենտրոնի և Վրաստանի «Նոր սերունդ» հայկական միավորման, Վրաստանում Թուրքիայի դեսպանատան մոտ կազմակերպվեց խաղաղ հանրահավաք և մոմավառություն: Մասնակցում էին հայ երիտասարդներ Թբիլիսիից, ներկայացուցիչներ Վրաստանի քրդական և ասորական համայնքներից:

Հարյուրի հասնող ցուցարարների խումբը եկել էր Թուրքիայի ներկայիս իշխանությունների կողմից Հայոց եղեռնը դատապարտելու պահանջով: Համաբնույթ բովանդակություն ունեին հնչող հայտարարություններն ու կոչերը, հայրենասիրական ոգեշունչ երգերը: Մասնակիցներն ընթերցեցին նաև «Տերունական աղոթք»-ը ու կատարեցին Կոմիտասի «Տէր ողորմեա»-ն: Ի հիշատակ անմեղ զոհերի՝ դեսպանատան առջև դրվեց ծաղկեպսակ: Ըստ նախատեսվածի, դեսպանին պետք է փոխանցվեր բողոքի նամակ-դիմումը, ուր հավաքի մասնակիցները Հայոց Մեծ եղեռնը ճանաչելու պահանջով դիմում էին Թուրքիայի ղեկավար մարմիններին: Պատճառաբանելով, որ այդ օրն աշխատանքային չէ, դեսպանատան աշխատակիցները նամակը չընդունեցին: